

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 24-Ի N 87-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

« ____ » _____ 2026 թ.

N _____-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
2014**

**ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի N 87-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և
34-րդ հոդվածները

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ`

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 24-ի «ՀՀՇՆ 20-06-2014 «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթներ» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 87-Ն հրամանի հավելվածի 26-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ`

«Մանկական նախադպրոցական հիմնարկների, բոլոր տեսակի

ուսումնական հաստատությունների (բացառությամբ՝ դպրոցների),
հիվանդանոցների, ծննդատների, պոլիկլինիկաների, մշակութային և
մարզական օբյեկտների, սանիտարահամաճարակաբանական, շտապ
օգնության և հրշեջ կայանների շենքերի հիմնական նորոգման վերաբերյալ
որոշումն ընդունելու դեպքում պատվիրատուն, որպես պարտադիր պահանջ,
պետք է իրականացնի նշված օբյեկտների վերակառուցում սույն
շինարարական նորմերում ամրագրված դրույթներին համապատասխան:
Դպրոցների դեպքում ելնելով տեխնիկատնտեսական
նպատակահարմարությունից, բնականոն շահագործման և դասապրոցեսի
անխափան կազմակերպման պահանջներից, ինչպես նաև հետագա
քայքայումից պահպանման համար թույլատրվում է իրականացնել սույն
շինարարական նորմերով սահմանված վերականգնում մակարդակն
ապահովող միջոցառումներ:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը
հաջորդող օրվանից: